


ուելի կամ պակաս չափով այս կարգին են պատկանում: Թէպէտ ինքն Էկկէ այս դիտողութիւններէց յետոյ այն բնական եզրակացութեան չէ գալիս: Թէ ուրեմն անդրոգով սպասել պէտք է, որ այդպիսի ողջմտ Ռոչչեաններն հետզհետէ պահպանողականների կողմն անցնեն և միացած ուժերով պաշտպանեն եկեղեցւոյ զաստութիւնը ծայրահեղ ազատամիտների դէմ: Բայց այդպիսի մերձեցում սպասելի է մօտիկ ապագայի համար: Որչափ և օրթնողորմներն ու Բաուրեանները ճիգ թափեն՝ նոցա ժամանակն անցած է և ասպարէզը Ռիտչչեաններին է մնում: որոնց մէջ մօտիկ ապագայում անշուշտ բաժանումներ և նոր պահպանողական և ազատամիտ կուսակցութիւններ յառաջ կգան: որոնց հետ կհուլուն նախկինները: Առ այժմ Էկկէի գիւրը ցանկացած ընդունելութիւնը չի գտնում իւր կուսակիցների կողմից և մանաւանդ այս կուսակցութեան ղեկավարների մի նեղ շրջան Բերլինում: որի բերանն է Krenzzeitung ազգեցիկ թերթը: շարունակում է շատ խիստ լեզու գործածել Ռիտչչեանների դէմ: Այդ կուսակցութեան աշխատութեամբ էր, որ նորերս Բերլին հրատարակուեցաւ Էրլանգէնի համալսարանի պահպանողական ուսուցչապետ Զիբերգ:

նմիջներ: որոնք մօտիկ ապագայի յայտարար նշաններ պէտք է համարուին: Եւ ուրեմն արժանի են մասնաւոր ուշադրութեան: Այդպիսի երեւոյթներից մէկն է հայ նախնական տիպար Հ. Մ. Մելեան: որ «Մշակ»-ի 126 հ.ում մի քաւական ընդարձակ յօդուած է գրել՝ պաշտպանելու համար այն սկզբունքը: Թէ «եկեղեցին է հասարակութեան համար եւ ոչ հասարակութիւնը եկեղեցու համար»: Այդ յօդուածը մեր դէմ է գրած՝ ի քննադատութիւն Ուրբախի մէջ հոգեւորական կոչման եւ աստուածաբանութեան մասին արտայայտած մեր զողտարների, եւ գրած է զօրեղ ջախջախիչ գրչով: որի ոյժն ու նեցուկը կազմում են «մեռել թաղող մեռել», «անծը պարարող օրինական», «փարիսեցի», «ղպիթ» եւ այլ այսպիսի գեղեցիկ մակդիրներ: Բայց կարող ենք հաւատացնել: որ այդ զօրեղ մակդիրները մեզ չեն վրդովեցնում եւ անհաւասար գէնքերով Տէր Հօր հետ պայքարի մէջ մտնել չի մեր դիտումը: Բանի որ սկզբունք է նորա համար Զուրաբի այն հասարակութեան, որի ընդունում է՝ ընտանաւար պէտք է աշխատել յարմարուել նաեւ այդ հասարակութեան ակտրժակին ու պահանջներին: Իսկ հասարակութիւնը յիրաւի բաջ եւ հլու ծառաներ է պահանջում: որոնք ընդունակ լինին ի հաճոյս նորա նոյն իսկ իրենց կարգի եւ կարգակիցների պատիւը ոտքի տակ տալու: — Մեզ զբաղեցնողը բուն երեւոյթն է, եւ նորա հետ կապուած մի կարեւոր խնդրի պարզաբանութեան պէտք է նուիրուած լինին այս տողերը:

Հայր Մելեանը մեզ մեղադրում է իրր թէ մենք պահանջ դնելով հոգեւորականի համար եկեղեցուն ծառայել եւ ոչ թէ հասարակութեանը: «բաժանում ենք աշխարհականը հոգեւորականից, ինտելիգենտը աստուածաբանից, եկեղեցին հասարակութիւնից»: Առաջին անգամը չէ, որ մեզ մեղադրում են այսպիսի կէտերով: ձգտումների համար. սկսած այն օրից, երբ մի խումբ ժեմարանականներ հոգեւորական կոչումն ընդունելու ցանկութիւնն ունեցան՝ այդ մեղադրանքը շատ անգամ կրկնուել է չնայելով որ մենք քանիցս հրատարակուեցաւ ցոյց ենք



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՐԱՍԿԱՆԵԱՅՑ  
 ԿՐԿԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԿՍԵ ՀՍՐՅԸ  
 ԵՒ  
 ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆՈՒԹԻՒՆԵՐ:

„Մշակ“ քաղիքը շարունակում է գրադուել քահանայական հարցով: Այդ առթիւ տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնը շատ հետաքրքրական է՝ ոչ հարկաւ նորա համար, որ խնդիրը լուրջ եւ քազմակողմանի ուսումնասիրութեան է ենթարկուում կամ թարմ ու օգտակար մտքերի աստու հոսանք յառաջ բերում՝ ոչ. այդ կողմից նա շահագանցող սղբատ է եւ ծանծարղի. այլ որ մի շարք երեւոյթներ հանդէս են գալիս այստեղ՝ հասարակութեան այնպիսի տարրեր եւ ժամանակակից աշխարհայեցողութեան այնպիսի

տուել նորա անհիմն եւ մտացածին լինելը.\* շնայելով որ հասկացող մարդու համար մեր գրած իւրաքանչիւր տողը, առհասարակ ճեմարանականների իւրաքանչիւր քայլը բողոք է նորա դէմ: Եւ Հ. Մելեան, որ կարողացել է հոգեւորականի սեւ վերարկուի տակ պայծառ պահել ինտելիգենտի լուսաւոր հոգին՝ պաշտպանելով կրկին ինտելիգենտների մեր դէմ՝ վարած դատը, տեսնում է որ նոյն իսկ իւր քննադատած յօդուածի մէջ մեր գաղափարները բողոքովին այլ են, քան ինքը մեզ վերագրել է կամենում: Բայց ենթադրում է բարեմտաբար, թէ մենք մեր ներքին միտքը մասամբ սրողելու մտքով ենք այդպիսի հակառակ մէջ բնկել, փոխանակ այն իսկական հակառակութեան համար աչք քանալու, որի մէջ գտնուում է ինքը՝ մինչ տարիներէ ի վեր պաշտօն կատարելով եկեղեցւոյ մէջ՝ մի անգամ լրջօրէն չէ հարցրել ինքն իրեն, թէ ի՞նչ է նշանակում քառոյ էկէզիզի:

Կրօնի ամենախնդճ դասագրքի մէջ անգամ կարելի է գտնել այն բացատրութիւնը, թէ եկեղեցի նշանակում է հարգելի և շնորհալի ճակատ: Որքան երբ խօսք է լինում եկեղեցուն ծառայելու մասին՝ մենք աչքի առաջ կարող ենք ունենալ միայն հաւատացեալների այդ ժողովը, կամ այն մարդոց համախմբութիւնը, որոնք ի Բրիտոս ունեցած հաւատով կատարած են փոխադարձաբար միմեանց հետ եւ ուխտել են առաջնորդուել կեանքի մէջ այն սկզբունքներով, որոնք իրենց հաւատից են քոխում՝ դիմել գաղափարական գործակցութեամբ՝ դէպի այն բարձրագոյն նպատակը, որ կեանքի առաջնորդն ու եկեղեցւոյ Հիմնադիրը իրենց առաջ դրել է:— Բողոքովին տարբեր հիմունքների վերայ է հաստատուած, տարբեր կազմակերպութիւն եւ տարբեր նպատակ ունի հասարակութիւնը: Այդտեղ մարդոց համախմբումը պատահական է, աշխարհային պայմաններից կախուած: Մի որոշ տարածութեան վերայ միասին ապրող մարդիկ ունենում են ընդհանուր կենցաղական շահեր՝ փոխադարձ օգնութեան կարիք

են գումար՝ ապրուստի միջոցներ հայթայթելու եւ նիւթապէս ապահով կեանք վարելու համար, եւ ստիպուած են լինում՝ այդպէս միացնել իրենց ոյժերը՝ հասարակաց աշխատութիւն եւ հասարակական կեանք ձեւակերպել:— Հարկաւ շատ անգամ՝ այդ երկու կազմակերպութիւններն արտաբուստ միանում են. հասարակութիւն կազմում են շատ անգամ ինչպէս օր. մեզանում, միեւնոյն եկեղեցական համայնքին պատկանող անձինք, բայց այդ պատճառ չէ երկու գաղափարները միմեանց հետ շփոթելու: Կարող են դէպքեր պատահել նաեւ, որ մէկն անդամ լինի գանազան կրօնների եւ ցեղերի պատկանող եւ գանազան գաղափարների տէր մարդկանցից բաղկացած մի հասարակութեան, եւ ոչ մի հաւատակից չունենայ իւր ժողով: Յամենայն դէպս եկեղեցի եւ հասարակութիւն իրարից անկախ կազմակերպութիւններ են, եւ նոցանից ոչ մէկը միւսին ծառայելու չէ կոչուած՝ իւրաքանչիւրն իւր առանձին գոյութեան իրաւունքը ունի:

Հայր Մելեան յառաջ բերելով իւր նշանաւոր սկզբունքը, թէ «եկեղեցին է հասարակութեան համար եւ ոչ հասարակութիւնը եկեղեցու համար», կարծել է տալիս իրր մենք ասած լինէինք, թէ հասարակութիւնը եկեղեցւոյ համար է, որ շենք ասել, առհասարակ այդ ամբողջ նախադասութիւնը մենք համարում ենք մի դատարկ քառախաղ, որի իսկական նշանակութեան մասին հագի թէ հաշի տուած լինի իրեն Տէր Հայրը, եւ որի համար իրբեւ փաստնորա ի շար գործ դրած աւետարանի խօսքերը, թէ «շաքաթը մարդու համար է» ոչինչ չեն հաստատում. այդպիսի փաստաբանութեամբ կարելի էր հաստատուել, որ Աստուած եւս մարդու համար է: Մենք ասել էինք միայն, թէ հոգեւորականը եկեղեցուն պէտք է ծառայէ եւ ոչ հասարակութեան, եւ վերեւ ասածներից պարզ պէտք է լինի արդէն, թէ ինչ էինք հասկանում՝ դորանով: Պարզ պէտք է լինի նաեւ, թէ որպիսի մեծ անտեղութիւն է ասել, «Մեր եկեղեցականութիւնը մեր հասարակութեան ընտրածն է ու հասարակութեան համար»: Հասարակութիւնն իր համար տանուտէր, ջրբաժան, քր-

\* Տես. ի միջի այլոց Ա. Բ. Բ. Բ. 1895, յուլիս, էր. 250:

ժիշկ ընտրել կարող է: Բայց ոչ երբէք եկեղեցականներ: Եկեղեցւոյ պաշտօնեան ընտրուում է եկեղեցւոյ կողմից եւ կոչուում է ո՛չ թէ այս կամ այն մարդկային հատարակութեան ծառայելու: այլ այն Բրիտանիոյ որ եկեղեցւոյ անտեսանելի զուխն է. եւ Նորա գծած շաւղով ընթանալ: Նորա քարոզած աւետարանն ուսուցանել: Նորա հոգուով Նորա զաղափարներով մարդիկ կրթել եւ ի կէտ կոչմանն ուղղել՝ իւր սրբազան պարտականութիւնը պէտք է լինի: Հարկաւ նա՝ իբրեւ նիւթական կարիքների տէր մարդ՝ միեւնոյն ժամանակ հատարակութեան անդամ է եւ պարտաւոր է իւր ձեռքից եկած ծառայութիւնն այդտեղ եւս շինայել. Բայց նա գործում է այդ դէպքում՝ իբրեւ սոսկ քաղաքացի եւ ո՛չ իբրեւ եկեղեցական: Խնդիրը նորա է՛լ-դէ՛ս-է՛ս՝ կոչման մասին է: որ իւր յատուկ պարտաւորութիւններն ունի՝ եւ զանց անել այդ պարտաւորութիւնները՝ կոչանակէ ջնդուներ ածնելին է՛լ-դէ՛ս՝ կոչուած մի զաղափարական համայնքի եւ նորա սնուցած զաղափարական կեանքի գոյութիւնը՝ այլ ամէն ինչ այս աշխարհի չափով չափել: Իրօք Հայր Մելեան այդպէս եւ անում է:

Մենք ասել էինք. «Աստուածաբանութիւն ուսանողը մի օր պէտք է իբրեւ քահանայ եկեղ. կարգեր կատարէ. իբրեւ կրօնուսույց ուսուցչական ամբիոնից: իբրեւ քարոզիչ՝ եկեղեցւոյ ընմից: իբրեւ հոգեւոր հայր եւ սիրովիչ տներում: հիւանդի անկողնի մօտ եւլն. խօսէ»: Տէր Հայրը ի՞նչ-հո-ւ-ն-է-դ-վերջին խօսքերն իբրեւ շեղած է նկատում՝ եւ ապա մեղադրում է մեզ-թէ կամենում ենք «հոգեւորականի գործունէութիւնը սահմանափակել միայն ծէսեր կատարելու: կրօն դաս տալու: քարոզ տալու: այսինքն՝ ի՞նչ-պէ-ս-հոգեւոր-հոգեւոր-ը-ն-է-դ-՞: Ուրեմն դատարկ խօսք է քարոզ տալը: կրօն դաս տալը. դատարկ եւ ձեւական քան է ծէսեր կատարելը . . . Ձեք ի՞նչ-պէ-ս-է-դ-՞: . . . իսկ մեր կարծիքով գործ է այդ ամէնը եւ քար կրելուց աւելի ծանր գործ՝ աւելի պատասխանատու գործ: քան աշխարհի բոլոր միւս գործերը. եւ ով այդպէս չէ ընդունում, ում ամար Բե-ե-լ Բե-ս-է-լ ծաղրական է եւ ար-

համարհելի: ով Տիրոջ սեղանի առաջ կանգնած միմնջում է. «Այո՛, այո՛ եւ ես մի եմ՝ ի նոցանէ»... կամ՝ համարձակուում՝ անմահական մարմինը ձեռքն առած քաղաքացի էլ «Առ՛ք, կեր՛ք»... եւ մէջքից սարսուռ չէ անցնում: սառը քրտինք պատում՝ ամբողջ մարմինն՝ նա բոլորովին զուր տեղն է վերարկու հագել: Այդպիսին չէ կարող երբէք «եկեղեցում» իր պաշտամունքը՝ դրսում՝ յայտնի սահմանադրված ծէսերը սրբութեամբ ու գիտակցութեամբ կատարել. եւ մենք չենք հասկանում՝ ինչի՞ մէջ պէտք է երեւի այնուհետեւ նորա «անձնադիր հովիւ» քարի օրինակ՝ քանիմաց առաջնորդ եւլն. լինելը»... ընտրողական պայքարների մէջ արդեօք: Գեղեցիկ քստերով ոչինչ չի շինուի. եթէ մենք Հայոց եկեղեցու համար քաղղաւորութիւն չենք համարում՝ ի՞նչ-է-լ-է-լ-պաշտօնեաներ ունենալը՝ պատճառը հէնց այն է: որ այդ ինտելիգենտները ոչ պատրաստութիւն ունին եւ ո՛չ սիրտ՝ եկեղ. կոչման իսկական նշանակութիւնն ըստնելու եւ նորա պահանջները կատարելու: այլ նայում են նորա վերայ իբրեւ մի անհրաժեշտ շարիքի՝ իբրեւ մի պատրուակի վերայ, որ կամայ ակամայ յանձն առնել պէտք է: եթէ կամենում ես ինչ ինչ ժողովներում՝ նախագահ լինել եւ ո՛չ սոսկ անդամ: Այդպէս չէ՞ միթէ... Հայր Մելեան գոնէ հակառակը չէ ապացուցել:

Նա «ինքնաստեղծ մեղադրանք» է համարում մեր ասածը: թէ մեզանում՝ նշանակութիւն չեն տալիս հոգեւորականի «իւր պաշտօնին վերաբերեալ գիտութիւնները սովորած լինելուն»: եւ այնուամենայնիւ պահանջում է: որ ասպարէզը Բայց լինի ինտելիգենտների համար: Հետաքրքրական է իմանալ՝ արդեօք քանի՞սը դոցանից ամենատարական ծանօթութիւն ունին չենք ասում՝ ս. գրքի կամ՝ աստուածաբանական այլ եւ այլ առարկաների: այլ գոնէ մեր եկեղեցւոյ այն հայրերի մասին, որոնց անունից այնպէս ի՞նչ-է-լ-ով խօսում է Տէր Հայրը: Նորա խօսքերից կարելի էր եզրակացնել, թէ ս. Սահակ եւ Մեսրոպ եւ նոցա աշակերտները ճիշդ մեր ժամանակի ինտելիգենտներից էին, եւ երբ ս. Ղեւոնդեանք խոնարհեցնում էին

գլուխը դահճի սրի առաջ՝ հասարակութեան ծառայութիւն մատուցանելու համար էին անում: Կարող ենք սակայն հուսատացնել, որ մենք այդ հայրերին ո՛չ միայն յանուանէ ենք ճանաչում: այլ օրերով ու ամիսներով սպրել ենք հոգեպէս նոցա հետ, նոցա զբաւոր յիշատակարաններով շրջապատուած: Եւ երբ սկզբունք ենք դնում՝ հոգեւորականի համար եկեղեցուն ծառայել՝ համոզուած ենք որ նորա եւս ուրիշ սկզբունք չեն ձանարել: Որ այստեղ հոգեւորականութիւն եւ ժողովուրդ իրարից քաժանելու ինդիր չկայ ամենեւին եւ ամենամեծ անհեթեթութիւն է եկեղեցուն ծառայելը եւ: Զարգանան՝ աւելորդ են կարծեմ՝ նոր պատճառարանութիւններ դրա համար: Բոլոր թիւրիմացութիւնը յառաջ է գալիս նորանից, որ Հայր Մելքիան Երեւանի և Իջևանի քառերը նոյնանիչ է ընդունում: Այդ թիւրիմացութիւնը հեշտութեամբ կարելի էր ներել մի ինտելիգենտի, քայց նորա տակ թազուած կայ կատարեալ անհասկացողութիւն եկեղեցւոյ զաղափարական նշանակութեան մասին, որ ամենեւին ներելի չէ եկեղեցականին: Սովորութիւն է դարձել Հայաստանեայց եկեղեցւոյ ազատ ոգին եւ ազգային բնաւորութիւնս իրելու ծածկոց ծառայեցնել ամեն տեսակ գեղձումների համար, քայց երբ եկեղեցականներն իրենք աշխատում են այդ ծածկոցով պատել իրենց հոգեւոր մերկութիւնը եւ հուսատացնել, թէ այս եկեղեցին քոչորովին տարբեր է միս եկեղեցիներից եւ հակառակ պահանջներ ունի այն չէ պահանջում, ինչ որ Բրիտանի եկեղեցին անհրաժեշտաբար պէտք է պահանջէր: այլ մի աշխարհական հաստատութիւն է աշխարհական նպատակների համար—ճայրահեղ ազատամիտներն անգամ՝ պէտք է խոստովանեն, որ մեծ անտեղութիւն կայ այդտեղ, որ եկեղեցւոյ հակառակորդ լինելով հանդերձ չի կարելի այդպիսի վերաբերումս դէպի նա արդարացնել:

Եթէ հարցնենք ի՞նչն է եղել կղերական ձգտումների աղբիւրը, հին կտակարանի փարիսեցութիւնից սկսած մինչեւ մեր ժամանակուայ կաթողիկոսութիւնը՝ պատասխանը կլինի. ուրիշ ոչինչ, քայց եթէ կրօնը աշ-

խարհական նպատակների համար գործ դնելու ցանկութիւնը, միեւնոյն է՝ սեփական անձին են ծառայում՝ թէ հասարակութեան: Եկեղեցին պահանջում է իւր պաշտօնեաներից աշխարհն ուրանալ, աշխարհի քոչոր հարստութիւնները վաճառել՝ Երկնքի արքայութեան մարգարիտը ձեռք բերելու համար. իսկ կղերականները ընդհակառակն կեղծ մարգարիտներ են շինում՝ եւ իսկականի տեղ վաճառելով՝ կամենում են աշխարհի հարստութիւնները գնել. նոցա տեսնութիւնը միայն արտաքին զգեստի մէջ է, եւ մեր ժամանակի գլխաւոր կուրութիւններից մէկն եւս այն է, որ սովորած լինելով յաճախ կղերականներ տեսնել եկեղեցականի վերաբերելով՝ եզրակացնում են, թէ ուրեմն կղերական ոգի տուողը ինքը վերաբերուն է, առանց մտածելու, որ նախ քան այդ վերաբերուն սրբութեան նշան համարուէր եւ ճարտիկ մարդիկ կարողանային նորանով խարել ուրիշներին՝ պէտք է որ երկար ժամանակ սուրբ մարդիկ հազած եւ փառաւորած լինէին: Կղերականութիւն եկեղեցին չէ ստեղծել, այլ նորա վերայ բռնանալ եւ նորա շնորհներն իրելու գէնք գործածել կամեցող աշխարհը: Եւ ամէն անգամ՝ երբ այդ շնորհները գործ են դրում՝ կողմնակի նպատակների համար՝ անխուսափելի կերպով կղերականութիւն յառաջ կգայ: Անհրաժեշտ չէ որ ստոր նպատակներ լինին. փարիսեցիներն սկզբում՝ ամենն ունեւորուն եւ մաքուր ոգեւորութեամբ լի ազգասէրներ էին. քայց տասնեակ տարիներով կրօնը իսրայէլի թագաւորութիւնը վերականգնելու համար իրելու միջոց գործածելուց յետոյ՝ նոքա սովորեցին իրենց անձնական օգտի համար եւս գործածել: Այդպէս չէին մարգարէները՝ Ամուփ, Ովսէ, Եսայի, Երեմիա. պակաս բուն սիրով չէին սիրում՝ նորա իրենց ժողովրդին, որի թշուառութիւնները տեսնելիս նոցա աղիքները կտրատուում էին. քայց փոխանակ փարիսեցիների պէս հաճոյանալու նորան եւ նորա կրքերը շոյելու՝ դատափեռում էին, աստուածային արդարութեան, սիրոյ եւ սրբութեան անունով՝ անկումս եւ կոտորած սպանում. մարդոց քոչոր հաշիւները պէտք է ջնջուին եւ քոչոր գորութիւններն ընկճուին

Աստուծոյ առաջ՝ ամեն ինչ իբրև միջոց ծառայէ նորա սուրբ կամբը յառաջ տանելու համար— ահա Աստուծոյ մշմարիտ պաշտօնէի դաւանութիւնը:

Անբաժնելի համարելով ուրեմն, որ եկեղեցականն առանձին պատրաստութիւն ունենայ եւ կոչումն ընդունելիս նպատակ դնէ եկեղեցուն ծառայել, եւ ո՛չ ուրիշ որեւէ երկրաւոր մեծութեան՝ մենք ո՛չ միայն կղերական գաղափարներ արծարծելու միտք չունինք, այլ բոլորովին հակառակն ենք ձգտում: Հարկաւ այնպիսի կղերականութիւն, որպիսին կաթողիկէ աշխարհն է ներկայացնում: մեր մէջ գոյութիւն ունենալ չի կարող. քանիցս անգամ՝ առիթ ենք ունեցել կրկնելու, որ դա մի ստանձնայատուկ երեւոյթ է, սխալմամբ ընդհանրեցրած այն հասարակ պատճառից, որ ներկայ սերունդը պատմութեան մէջ միայն Հռոմէական եկեղեցւոյ անցեալին է ծանօթանում՝ եւ սովորում: Բրիտոսի եկեղեցին շփոթել այն նուիրապետական հաստատութեան հետ, որ Հռոմի կեսարների աշխարհաւարութեան ժառանգ պապերն են կազմակերպել. այնտեղ, ուր Հռոմ՝ չկայ եւ կեսարներ չեն եղել՝ չի կարող նաեւ աշխարհը նուաճելու տենչով լի կղերականութիւն յառաջ գալ. քայց կարող են լինել եկեղեցւոյ անունը ուրիշ միջոցներով շահագործողներ, եւ ահա դոցա դէմ՝ է մեր բողոքը:— Պէտք է անաչառութեամբ քննել թէ ովքեր են այն ինտելիգենտները, որոնց առաջ ազատ քանալ ենք կամենում՝ եկեղեցական ասպարէզը: Յայտնի է, որ կանոնաւոր ուսումն աւարտած երիտասարդը սովորաբար ընտրում է նաեւ այն կոչումը, որի համար պատրաստել է իրեն ուսումնարանը. հրապարակի վերայ մտում են մի խումբ կիսատ ելած կամ արտաքսուած, նոյն իսկ կանոնաւոր ուսումնարանի երես շտեմած քաղաքացիներն, որոնք ինչպէս են միայն նորա համար, որ լրագիր են կարդում եւ ինչպէս խնդիրների վերայ վիճում: երեւակայելով թէ՛ որովհետեւ Բոկլը ստանց դիպում ունենալու զարգացած եւ նշանաւոր մարդ է դարձել իրենք եւս ուրեմն զարգացած եւ նշանաւոր մարդիկ են: Արդ՝ ի՞նչ են բերում՝ այդպիսիները եկեղեցւոյ

համար, ի՞նչը կարող է առաջնորդել նոցա եկեղ, կոչումն ընտրելու. որչա՞նի գաղափար ունին նոցա այն աւետարանի մասին, որն ուսուցանելը՝ որչափ պաշար այն հաւատից, որն արծարծելը նոցա առաջին սրբազան պարտքը պէտք է լինի:— Այստեղ ուրիշ ելք չէ մտում, կամ պէտք է ընդունել, որ եկեղեցական ասպարիզի վերայ ելնելու համար համապատասխան պատրաստութիւն եւ կրթութիւն: համապատասխան համոզումներ եւ ձգտումներ են պահանջուում: եւ կամ՝ ճակատ պէտք է ունենալ պնդելու, թէ եկեղեցական լինում են աշխարհական նպատակների համար, թէ այն ամէնը ինչ որ զուտ եկեղեցական է՝ ձեւականութիւն է, եւ ինտելիգենտ մարդը քաւական է ձեւերը կարողանայ կատարել թէկուզ նոցա ներքին իմաստի մասին գաղափար անգամ չունենայ եւ իւր համոզմամբ քրիստոնեայ իսկ չլինի, որ ազատ համարուի այնուհետեւ վերարկու հագած իւր աշխարհական նպատակներին հետեւելու, հասարակութեանը ծառայելու:

Հայր Մելիանին եւ նորա գաղափարակիցներին ուղղած մեր վերջին խօսքն այս է. ով եկեղեցական կոչումն է յանձն առնում՝ առանց իւր կեանքի իսկական նպատակը դնելու եկեղեցուն ծառայել՝ նա մեղանշում է Աստուծոյ եւ մարդոց առաջ, եւ քարծրանում է այնպիսի մի ծառի վերայ, որը տակից կտրել է կամենում: Եկեղեցին կղերը չէ եւ եկեղեցուն ծառայել չի նշանակում՝ իրեն կամ՝ որեւէ դասակարգի շահերին, այլ Բրիտոսին եւ Բրիտոսի ժողովրդին ծառայել՝ Երկնքի արքայութեան սերմերը ցանել այս աշխարհի վերայ եւ հունձը Աստուծոյ շտեմարանների մէջ ժողովել: Եկեղեցին իւր պաշտօնեաների հետ հաշիւների մէջ չէ մըտնում, պայմաններ չէ դնում՝ եւ ոչ մի անձնական քարիք չէ խոստանում, այլ կատարեալ անձնազոհութիւն է պահանջում՝ պահանջում է թողնել ամէն ինչ, ուրանալ աշխարհի հետ ունեցած կապերը՝ այո՛ նաեւ աշխարհային հասարակութեան հետ ունեցած կապերը՝ չքանալ եւ չքացնել այն ամէնը, ինչ որ ետական է, զձու՛ձ, նիւթական, աշխարհային, որպէս զի գաղափարը յաղթանակէ՛ սիրոյ

և ճշմարտութեան սուրբ գաղափարը: Ով պատրաստակամութիւն ունի այսպէս Զրիստոսի խաչն առնելու և Նորա ետեւից գնալու: ում՝ առաջնորդող սուրբ գաղափարն է և բոլոր գործերն այդ գաղափարից են բղխում՝ նա իսկական մտքով եկեղեցական է: Թէկուզ դորա համապատասխան տարազ չունենայ՝ մի աշխարհոջակ քաղաքական գործիչ լինի: ինչպէս Գլադստոն: կամ փողոցներ աւելող մի յետին մշակ: Եկեղեցին չէ պահանջում: որ իւր պաշտօններին վերայ իրեն մի առանձնաշնորհեալ և բոլոր միւս մարդկանցից զերազանց դատակարգի վերայ նայեն: քայց կարում է նոցա իրենց շքապատից, ազատ է կացուցանում միւս աշխարհային պարտականութիւններից: որպէս զի միջոց և կարողութիւն ունենան իրենց կոչման պահանջած սրբազան պարտքերը կատարելու: Իսկ այդ պարտքերը կատարելու համար որոշ կրթութիւն և գիտութիւն, ծանօթութիւնների և հրահանգութիւնների որոշ պաշար է պահանջուում: որ իւր մէջ ամփոփել աշխատում է համալսարանների աստուածաբանական բաժինը: Սուտ է թէ մենք ստել ենք՝ միայն աստուածաբանը կարող է լաւ հոգեւորական լինել: այդ ասում ենք՝ հոգեւոր կոչման համար պատրաստող միակ բարձր գիտութիւնը աստուածաբանութիւնն է: և կրկնում ենք: որ այդպէս եղել է միշտ: որ այլ կերպ չեն հասկացել և այլ կերպ չեն պատրաստուել մեր եկեղեցւոյ հայրերը: որ այսօր եւս՝ ինչ ծանապարհով ուզում է լինի: դպրոցում թէ դուրսը: հայրենի երկրում թէ օտար տեղ՝ պէտք է կարեւոր հրահանգութիւններ և գիտութիւն ձեռք բերած լինի մէկը: քրիստոնէական աշխարհայեցողութիւն ունենայ և հաստատուն համազումներ: որպէս զի մարտը խղձով կարողանայ հոգեւորական կոչումն ընդունել: Չենք ուրանում: որ կոչումն կատարել շատերին յետոյ իսկ պակաս մնացած հրահանգութիւնները ձեռք բերել և խախտա համոզումներն ամբաստնողել: քայց եկեղեցւոյ ասպազան բաղդի հաճոյքին թողնել այդպէս՝ մեր իրաւունքը չէ: մենք պէտք է աշխատենք ասպազայ հոգեւորականներին իրենց կոչման համապատասխան

կրթութիւն տալ: և ասպա իրաւունք ունենանք յոյս դնելու ս. Հոգւոյ շնորհաց առատ ներգործութեան վերայ: որից կախուած է նոցա իսկական արժանիքը:

Կ. Վ.



ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետ մի անգամ ևս Բիւրական ամարանոցում մի քանի օր անցնելուց յետոյ (յուլիս 18—22) փոքր ինչ տկարութիւն զգալով՝ ստիպուած էր իւր վարուց ի վեր ծրագրած ճանապարհորդութիւնը դէպի Տաթև մինչև յուլիսի 26-ը յետաձգել: Այդ օրը կէսօրից յետոյ ժամի 5-ին Նորին Վեհափառութիւնը սկսեց իւր ուղեգնացութիւնը՝ մինչև Վաղարշապատի այգիներից դուրս կասքով: ուր իջաւ: օրհնեց ճանապարհ ձգելու համար եկած Դեր. Սուքիաս և Արիստակէս Սրբազաններին, Արծ. Համազասպ, Ղեոնդ, Յուսիկ, Աշոտ, Կարապետ և Բարդէն վարդապետներին, զիւզացի մի խումբ ձիաւորների և ապա ձի նստելով իւր շքազիրների փոքրիկ խմբի զլուին անցաւ և յառաջ արշաւեց, իւր հետ տանելով յետ մնացածների ջերմ բարեմաղթութիւնները: Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Բարձր. Գարեգին վարդապետ և Դիւանապետ Արծ. Կորիւն վարդապետ: Առաջին զիշերը Նորին Սրբութիւնը բարեհաճել էր Մողէի ս. Գէորգ փանքում անցնել. յաջորդ օրը հիւր է եղել Դեր. Սարգիս արքեպիսկոպոսի մօտ նորա ծննդավայր Ղարաբուլաղ գիւղում, երրորդ զիշերը փանքապատիան Բճնի գիւղում է անցրել և չորրորդ զիշերը ծաղկունք գիւղում: յաջորդ օրը վերջապէս հասել է Սեան, ուր Վեհափառի գալտեանն սպասում էր Երևանի Փոխանորդ Դեր. Մերսէս արքեպիսկոպոսը՝ ուղեկցելու համար դէպի Տաթև:

Մի զիշեր միայն այդտեղ մնալով՝ յուլիս 31-ին Նորին Վեհափառութիւնը մեկնել է և օգոստոս 1-ին հասել է Նոր Բայրազկի, որտեղից ճանապարհը Դարալագեաղի վերայով